ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 8 *Общественные науки*

ԻՆՊՆԱԳՐԱԿԱՆ

Վ. Գ. Մելիքսեթյան

ԶԵՅԹՈՒՆԻ 1862 ԹՎԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ռուսահայերը ազատագրական պայքարի բուն էջեր չեն գրել Ֆեոդալական Թուրքիայի բարբարոս սիրապետության տակ ճնշված ժողովուրդների ռևոլուցիոն պայքարի պատմության մեջ։ Ազատագրական այդ պայքարի փայլուն էջերից է Զեյթունի 1862 թվի ապստամբությունը։

Անցյալ դարի առաջին կեսում Եվրոպական Թուրքիայում տեղի ունեցած սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, Հունաստանի և Սերբիայի ազատագրումը Թուրքիայի սիրապետությունից, ապա Ղրիմի պատերազմը, Ռուսաստանում ծայր առած գյուղացիական ռևոլուցիոն շարժումներն իրենց ազդեցությունն ունեցան արևմտյան հայության տնտեսական-քաղաքական կյանքի վրա։ 1850—60-ական թվականները բեկման տարիներ հանդիսացան հայ ժողովրդի կյանքում։ Տեղի էր ունենում արևվելահայերի և արևմտահայերի տնտեսական, կուլտուրական և քաղաքական մերձեցում։

1860 թվի մայիսի 24-ին գործադրության մեջ դրվեց «Ազգային Սահմանադրությունը», որը որոշ չափով մեղմացնելու էր պետական ճնշումը, ամիրայության ու կղերականության հալածանքներն ու բռնությունները և հանդիսանալու էր ժողովրդական դեմոկրատական շարժմանը խթանող մի միջոց։

Սակայն Սահմանադրության մեկ տարվա «գործադրությունից» հետո հայ լիբերալ բուրժուազիան՝ վախենալով ժողովրդական մասսաների նոր պոռթկումներից ու ընդվզումներից, բռնեց ռեակցիոն դիրք։

Օսմանական կառավարությունը կատաղի հալածանք սկսեց Արևմտյան Հայաստանում։ Ռառակցով տնտեսական և քաղաքական ճնշումը հայ ժողովրդի նկատմամբ։

Հայերի հավաքական դիմադրությունը վերջ տալու համար, Թուրքական կառավարությունը հայկական նահանգներում բնակեցրեց Բալկաններից ու Կովկասից Թուրքիա բերված մի քանի տասնյակ հազար չերքեզների։ Հնարավոր բոլոր միջոցներով սրվում էին հայերի ու քրդերի, հայերի ու չերքեզների հարաբերությունները, ոտնահարվում էին հայերի իրավունքները։ Օրենքները փոխարինվում էին փաշաների, բեգերի ու Թասունների կամայականություններով։ Մի քանի վայրերում հայ գյուղացիներն ամբողջ ընտանիքներով հանդիսանում էին գնման ու վաճառքի առարկա։

Մարքոր և Էնգելսը սուլթանական ու ցարական բռնակալությունների լծի տակ տառապող ժողովուրդների փրկության միակ ելքը համարում էին ռևոլուցիան։

Հայ ռևոլուցիոն դեմոկրատիան սուլթանիզմի դեմ մղվող պայքարը առաջին պլանի վրա էր դնում և խիստ կարևոր նշանակություն տալիս, մանավանդ 1860-ական թվականներին, երբ սուլթանական պետության դեմ ապստամբվել էին Մակեդոնիայի, Բոսնիայի սլավոնները և Կրետեի հույները։

Արևմտյան Հայաստանում քաղաքական աշխատանքի կինարան էին դարձել Կ. Գալիոը, Վանը, Զմյուռնիան, Կիլիկիան։ Արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիան սկսել էր իր քաղաքական գործունեությունը։ Կազմակերպվել էին մի շարք ընկերություններ, որոնցից աչքի էր ընկնում իր քաղաքական գործունեությամբ՝ «Երկրագործական ընկերությունը», որի անդամն էր նաև Մ. Նալբանդյանը։ Նշանավոր աշխատանք էր կատարում և Հ. Մուրադյանի գլխավորած «Անձնվեր ընկերությունը» Կ. Գալուում։ Այդ ընկերության մասին Ս. Երիցյանը գրում է. «Այս ընկերության նպատակն էր Կ. Գալուում գտնվող պանդուխտներին կարդալ ու գրել սովորեցնել ձրիաբար, բայց 1862 թ. Զեյթունի խռովության ժամա-

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Գիտական խորհրդում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար պաշտպանած դիսերտացիայի ինքնուսիֆերատը։

[2] «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1898 թ. № 5 էջ 224։

նակ դա յուր հայացքիրը ընդարձակեց և այնուհետև շատ օգնեց մեր լեռնաբնակ ազգայնոց թե նյութապես և թե բարոյապես։[1]

Մի շարք կողմերով հետաքրքիր է և կարևոր նշանակություն ունի Սերովբե Թագվորյանի նամակը գրած Նալբանդյանին 1862 թվի մայիսի 24-ին[2] և Նալբանդյանի ծածկագիր բառացուցակը։

Այդ երկու փաստաթղթերը որոշ չափով լույս են սփռում Նալբանդյանի և նրա կողմնակիցների քաղաքական գործունեության վրա՝ Արևմտյան Հայաստանում։

Թագվորյանն այդ նույն նամակում գրում էր ապստամբության նախապատրաստման, զենք և գինամթերք ձեռք բերելու, գաղտնի ընկերություններ կազմակերպելու մասին։ Թագվորյանը՝ Նալբանդյանին իրազեկ էր դարձնում, որ կառավարությունից իրավունք էր առացել կազմակերպելու նոր «լոժա»։ Թույլատրված էր, որ այդ «լոժան» ունենա «գաղտնի ժողովներ»։ Նա հույս ուներ օգուտ քաղել այդ կազմակերպությունից «վասն զի ասոր ծայրը հեռուն է»։[3] Հայտնի է, որ Նալբանդյանի կողմնակիցները միջոցներ էին փընտրում, օգնություն ու օժանդակություն կազմակերպում Զեյթունում 1860 թվին սկսած ազատագրական շարժումը հաշող վախճանի հասցնելու համար։ Այդ նույն նամակի մեջ գրված է. «Ծավրոսեն վարդապետ մը եկավ հոս, քանի որ է որ կաշիտաթիմ առուտուր մը ընեմ այս մարդուս հետ... քիչ մը ոսակ ես, քիչ մ'ալ բարեկամին մեկը ավինք անոր, որ հարկավոր եղած գասագիրքները առնի և համբու ծախք ընե։ Մնացածին համար խոսք ավինք, որ պիտի աշխատինք իրենց համար»։[4]

Մենք այն կարծիքին ենք, որ դեռ Զեյթունի նշանավոր ապստամբությունից առաջ Մ. Պեշիկթաշլյանը, Ս. Թագվորյանը, Հ. Սըվաճյանը, Հ. Շիշմանյանը (Մերենց), Զիլինդարյանը և ուրիշները կապ են ունեցել զեյթունցիների հետ, ցույց են տվել նյութական օգնություն և քաղաքական ղեկավարություն։ Սրբուհի Երիցյանը Պեշիկթաշլյանի մասին գրած իր հիշողությունների մեջ նշում է, որ Պեշիկթաշլյանը 1862 թվին գաղտնի սեսակցություն էր ունենում Զեյթունի ներկայացուցիչները հետ, խորհուրդներ էր տալիս նրանց։ Իսկ Մերենցը 1862 թվից (Զեյթունի ապստամբությունից առաջ) մինչև 1863 թիվը գտնվում էր Կիլիկիայում։

Արևմտահայ դեմոկրատիայի սկսած գործունեությունը կատաղի դիմադրության էր հանդիպում սեակցիոն բուրժուա-կղերական հոսանքի կողմից։ Մերենցը գրում էր, որ Կ. Պոլսի հայ կաթոլիկ եկեղեցու պետ Հասունյանը ամբաստանագրեր էր գրում այն մասին, որ Կ. Պոլսում հիմնված «երկրագործական ընկերության» տնգամները փորձում են վերականգնել հայկական անկախ պետությունը։ Իսկ Մերենցի կենսագիրներից մեկը գրում է. «... Հասունը, որ անթարթ աչքերով հետևում էր... այդ ընկերությանը..., որը ձգտում էր քաղաքական նպատակների և թե նա ընտրել է Կիլիկիան իբրև ապստամբական նպատակների կենտրոնավայր։[5] Սուլթանական կառավարությունը, որ Զեյթունի նվաճման բազմաթիվ փորձեր էր կատարել, օգուտ քաղելով այս մատնություններից, կարուկ միջոցների դիմեց բնաջինջ անելու համար Զեյթունի աղատասեր լեռնականներին։ Այդ նպատակով Մարաշում կենտրոնացվեց թուրքական կանոնավոր դորքի մի փոքր միավոր։ Երկրի կուսակալ Հաղիզ փաշային իրավունք տրվեց Զեյթունի վրա արշավանքի դուրս բերելու Կիլիկիայի ավարառու ցեղերը։ Դերվիշների, շեյխերի, մոլլաների խմբերը շրջում էին քաղաքներն ու գյուղերը, բորբոքում մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդ ֆանատիզմը ընդդեմ հայ բնակչության։ Հալեպի կուսակալության բոլոր անկյուններից Մարաշ էին դալիս բաշիբոզուկների տասնյակ խմբեր։

Թիստ հալածանք է սկսվում Մարաշի, Ալբիստանի և Հաջնի հայ բնակչության դեմ։ Թշնամու զինված հորդաները փակում են Զեյթուն տանող ճանապարհները և անցուղիները, որպեսզի այն դրկեն օգնություն ու օժանդակություն ստանալու հնարավորությունից։

Սկսվում է հարձակումը Զեյթունի հայ գյուղերի վրա։ Դավառակի գյուղացիությունը կատաղի դիմադրություն է ցույց տալիս։ Թուրքական զինված խմբերը դաժանորեն ճնշում են հայ գյուղերի բնակչության լիմադրությունը, ավերում ու կործանում մի շարք բնակավայրեր։ Թուրք բաշիբոզուկների վայրագությունների մասին Մերենցը գրում է.

«Արք ե կանայք և աղայք բոլոր սուրի բերան գնացին, տունները կողոպտեցան և

---

[1] «Փորձ», 1887 թ., Ս. Երիցյան—«Իմ ծանոթությունը պ. Պեշիկթաշլյանի հետ», № 4։

[2] Մ. Նալբանդյան—«Ամբողջ երկեր», Մոսկվա, 1936 թ., 445—446։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

[5] «Փորձ», Թիֆլիս, 1877 թ., № 4։

[6] «Արաքս», Պետերբուրգ, 1888 թ. գիրք բ Թ. Զամարյան—«Մերենցի կենսագրությունը»։

ամբողջ գյուղը հրո ճարակ եղավ։ Աբյունը փողոցներու մեջ կվազեր և հրդեհի մուխը սոսկում ու սարսափ կծավալեր մերձակա գյուղերը։ Ծաշան հրամայեց գյուղի մատակա հայ վանքին դռները խորտակել, և այս արյան ծարավի մարդիկը կուսակալին աչաց առջևը և նորա հրամանով վանահայրը և միաբանքը հոշոտեցին... և նվիրական սպաս անոթ և զարդերը բաժանեցին. վերջը յուր դորաց հրամայեց փաշան վանքն ալ հրդեհելու։[1]

Ազիզ փաշայի մահ ու ավերածությունն տարածող հորդաները շարժվեցին Զեյթուն քաղաքի վրա։

Կան մի շարք վկայություններ այն մասին, որ զեյթունցիները փորձում են խուսափել պատերազմից, թերևս ժամանակ շահելու հոգատակով։ Ի վերջո հայ լեռնականները՝ կորցնելով կուսակալից հաշտություն ստանալու բոլոր հույսերը, որոշում են հնարավոր բոլոր միջոցներով դիմադրել թշնամուն և պաշտպանել Զեյթունը։ Զեյթունցիներին միանում է գավառակի հայ գյուղերից փախած բնակչությունը։ Զինված բնակչությունը բաժանվում է մի քանի խմբերի։ Զեյթունցիները հաշվի առնելով թշնամու դերազանց ուժերը, որոշում են հակառակորդին դիմադրել քաղաքի բնագծերում, ակտիվ պաշտպանությամբ հյուծել թշնամու ուժերը և ապա անցնել ընդհանուր հարձակման։

Զեյթունի թաղապետներից Ղազարոս Շովրոյանն անցնում է մի ջոկատի գլուխ, հեղբում թշնամու օղակումը, գրավում Զախը Դերբեի բարձունքները, միանում Ալաբաշ հայ գյուղի զինված խմբին և դիրքեր գրավում այնտեղ։ Թշնամու մի մեծ ջոկատ սկսում է կատաղի հարձակումներ Շովրոյանի միացյալ ջոկատի վրա և փորձում գրավել Զախը գյուղը և համանուն բարձունքը։ Այստեղ մարտը խիստ կերպարանք է ստանում, Շովրոյանի խմբին հաջողվում է պարտության մատնել թուրքական մի հեծյալ ջոկատ։ Սակայն զեյթունցիների այս խումբը՝ կարված լինելով յուրայիններից՝ ռազմական և նյութական աջակցությունից, չի կարողանում շարունակել մարտը ու արգելել թշնամու ուժերի առաջխաղացումը և խիստ պարտություն է կրում։

Հայ լեռնականները վերախմբավորում են իրենց ուժերը և շարունակում հետախույզ խմբերի միջոցով տեղեկանալ Ազիզ փաշայի ուժերի և նախապատրաստությունների մասին։ Այդ միջոցին թուրքական բանակին ջոկվում է Աղրդաղի ուղղությամբ ճնշել զեյթունցիների դիմադրությունը և թշնամու մի մեծ ջոկատ նիրխուժում է քաղաքի ծայրամասը։ Իսկ թուրքական երկու թնդանոթներ շարունակում են ռմբակոծել Զեյթունը։ Առանց խուճապի մատնվելու, թաղապետ Սուրենյանն օգնության է հասնում Ենիտունյանի ջոկատին և միացյալ ուժերով թշնամուն դուրս են շպրտում քաղաքի ծայրամասերից։ Զեյթունցիները հաջողություն են ձեռք բերում նաև Սաղրի ուղղությամբ և Դարկըլարի կիրճում։ Այս երկու հատվածներում թշնամին տալիս է մեծ զոհեր։ Ազիզ փաշայի կրած կորուստները բարձրանում են նրա առանց այդ էլ անկազմակերպ գնդերը։

Հայ լեռնականները գլխովին ջախջախում են թերջիլիցիների հեծյալ ջոկատը և Դարկըլար կիրճում դարան մտած գնդերից մի քանիսը։ Թուրքական բանակը խուճապահար սկսում է փախուստի դիմել, գլխիկոր փախչում են նաև Ազիզ փաշայի ընտիր ջոկատները։ Հայ լեռնականները տեսնելով թշնամու ընդհանուր խուճապը, բոլոր կողմերից սկսում են անցնել ընդհանուր հարձակման և հետապնդել թշնամուն։ Նրանք կտրում են Դարկըլար կիրճում ծուղակն ընկած թշնամու գնդերի փախուստի ճանապարհը։ Զեյթունցիները քաղաքից ներխուժում են կիրճը և գլխովին ջախջախում Ջամուշ Օղլու բաշիբոզուկների խմբերը։ Հայ լեռնականները շարունակում են Ազիզ փաշայի բանակի մնացորդներին հետապնդել մինչև Մարաշի սահմանները։ Զեյթունի գավառակն ամբողջապես մաքրվում է թուրքական հորդաներից։ Այս հերոսամարտի մասին ուշագրավ տեղեկություն է տալիս մի հայ օրիորդ.

«Զեյթունի դանդակից հնչումը բոլոր հայոց ի վեր դիմելու նշանը տրված էր. Կռիվը սաստիկ կատաղի եղավ։ Հայերն ամուր տեղեր բռնած ըլլալով նե այլազգիներուն ազեկ ջարդ մը ավին... այսպես այլազգաց կորուստը վեց կամ յոթ հազարի չափ կհասնի... 18 պեյ ե գնգերու գլխավորները պատերազմի մեջ ընկած էին. հետևյալ օրը, օգոստոսի 3-ին, զեյթունցիք... դիականքը փոսերուն մեջ նետելու դրաղված էինք։[2]

Զեյթունցիների այս հերոսամարտը երկար տարիներ չմոռացվեց Զեյթունի վրա

[1] «Փարոս», Թիֆլիս, 1879 թ., № 11, էջ 23։

[2] «Կռունկ հայոց աշխարհին», 1863 թ., № 3, էջ 172։

[3] Նույն տեղում։

նոր արշավանքի ելնող թուրք փաշաների կողմից։

Հայ լեռնականների հաղթանակից երկյուղ էր կրում ռուլթան Ազիզը, մանավանդ որ Զեյթունի ապստամբության ընթացքում գյուղացիական հուզումներ բռնկվեցին Մարաշի, Հաջնի, Ալբիստանի հայ բնակչության շրջաններում։ Թուրքական կառավարությունը երկյուղ էր կրում, որ ազատագրական շարժումը կարող է համակել ողջ Կիլիկիան։ Կառավարությունը Հալեպից շտապ կարգով Մարաշ տեղափոխեց կանոնավոր զորքի մի քանի գնդեր։ Նոր արշավանք էր նախապատրաստվում Զեյթունի դեմ։

«Թուրքական կառավարությունը վճռեց ռազմի հանել 150 հազար զինվորներից բաղկացած մի բանակ Զեյթունը ոչնչացնելու համար»։[1]

Հայ լեռնականներին ահաբեկելու համար Մարաշի կառավարիչ փաշան «... ամեն պատառնակալին հրաման կուտար, ամեն իրանց հանդիպած զեյթունցիները դարնելու, կոտրելու և բանտարկելու»։

Թուրքական բիրա ուժերը կատաղի հալածանք ճնշում գեյթունցիների դեմ, որը տևում է մի քանի տարի։

Պաշարված դրությունը և սովի անտարկուվանդը ստիպում է հայ լեռնականներին «նազանդվելու» թուրք բռնակալությանը։

Այսպիսով վերջ է տրվում Զեյթունի անկախությանը, թուրքական կառավարության գեստական պաշտոնյան առաջին անգամ 1865 թվին ոտք է դնում անկախ լեռնականների հողի վրա և դրանով այնտեղ «հիմք գնում» թուրքական բիրա օրենքներին ու ճնշմանը։

Չնայած Զեյթունի ապստամբությունն ունեցավ այսպիսի անհաջող վախճան, բայց այդ շարժումն իր կնիքը դրեց հայ ժողովրդի քաղաքական կյանքի վրա։

Սկզբից և եթ ապստամբությունը Զեյթունում դուրս եկավ իր նեղ, տեղական նշանակությունից և ընդունեց համազգային բնույթ։ Այս հերոսամարտն ամենուրեք դիտվեց որպես ազգային ազատագրական շարժման եղակի երևույթ։

Զեյթունի ապստամբության օրերին գյուղացիական բուռն ելույթներ տեղի ունեցան Վանում և Մուշում, փողոցային ցույցեր՝ Կ. Պոլսում և այլ վայրերում։

Կ. Պոլսի հայերի կողմից մեծ խանդավառությամբ ընդունվեց Ազիզ փաշայի բազմահազարանոց բանակի պարտության լուրը և գեյթունցիների հաղթանակը։ Ժամանակակիցներից Սրբուհի Երիցյանը իր ապավորության մասին գրում է. «Զեյթունը հայ ժողովրդի ոգեորության ու ազգային հպարտության խորհրդանշանն էր այդ օրերին, այն տարին Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վրա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն որ մասնակից էր գրամական հանգանակությանց... Նույնիսկ հռոմեագավան հայ երիտասարդները մոռացել էին գեպի իրենց լուսավորչական եղբայրներն ունեցած տեսությունը, և ամենայն սիրով թե նյութապես և թե բարոյապես օգնում էին այդ ձևնարկություններին... վերջապես մեծ համակրություն կար ամենայն կողմանե գեպի հայությունը»։[3]

Ինչպես մենք վերևում նշեցինք, Զեյթունի ապստամբության օրերին գյուղատիկական բուռն ելույթներ են տեղի ունենում Վանում։ Վանեցիները կատաղի դայրությամբ են լցվում գեպի տեղական իշխանությունները ու նրա պաշտոնյաները։ Բռնությունները ու կամայականությունները ծայրահեղ չափերի էին հասել։

Վան քաղաքի բնակչությունը զինված ընդհարում է ունենում տեղի թուրքական ռազմիկանության և նրանց միացած մահմեդական ռեակցիոն տարրերի հետ։ Ապստամբների զինված պայքարը քանի գնում բորբոքվում է։ Վանում կատարվող գեպքերը լայն արձագանք են գտնում կուսակցության գյուղերում ապրող հայ բնակչության լայն շրջաններում։

Վանեցիներին օգնության են գալիս հազարավոր զինված գյուղացիներ։ Նոր ուժով բռնկվում են արյունալի կռիվները։ Հայերին հաջողվում է գրավել քաղաքի միջնաբերդը և պարսության մտանել թշնամուն։[4]

Ապստամբական ելույթներ են տեղի ունենում նաև Մուշի գավառում։ Այստեղի հայ բնակչությունը զինված դիմադրություն է ցույց տալիս և հրաժարվում է հարկ վճարել կառավարությանը։

Զեյթունի ապստամբությունից հետո արևմտահայ մտավորականությունը հաշվի առնելով Զեյթունի հերոսամարտի փորձը, նոր ծրագիր էր կազմում և նորից շոշափում հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերը։

---

[1] «Կռունկ հայոց աշխարհին», 1863 թ., № 3, էջ 172։

[2] Նույն տեղում, էջ 182։

[3] «Փորձ», Թիֆլիս, 1877 թ., № 4, էջ 193։

[4] «Փարիզ», Փարիզ, 1862 թ., № 76

Ուշագրավ է Նորատունկյանի ծրագիրը՝ ոտքի հանելու ռուսաց ու հարստահարված հայ ժողովուրդը իր բախտակից ժողովուրդների հետ միասին ընդդեմ սուլթանական ու դարական բռնակալությունների։[1]

Զեյթունի հերոսական ապստամբությունը բուռն արձագանք գտավ հայկական և օտարերկրյա մամուլում։ Կ. Գալի «Մեղուն», Զմյուռնիայի «Մաղիկը» այդ օրերին կոչ էին անում հայությանը, օժանդակություն ու օգնություն հասցնել զենքի դիմող զեյթունցիներին։ «Փարիզ» հայերեն թերթը ապստամբության ընթացքը լուսաբանող մանրամասն հաղորդագրություններ էր ապագրում։ Թերթի նախաձեռնությամբ դրամական օգնություն էր կազմակերպվում Տավրոսի հայ բնակչության համար։[2]

Արևելյան Հայաստանում «Կռունկ հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում ընդարձակ հոդվածներ են ապագրվում Զեյթունի դյուզացիության պայքարի մասին, ընդգծեմ թուրք բռնակալների։ Ռուսահայ մամուլը միաժամանակ նախաձեռնություն էր հանդես բերում, դրամական օժանդակություն կազմակերպում ապստամբ զեյթունցիների համար։[3]

Ակներև է Զեյթունի շարժման ազդեցությունը և նրա նշանակությունը Արևելյան Հայաստանի լիբերալ մտավորականության վրա։ Ռ. Պատկանյանը 1860-ական թվականներին եռանդուն պրոպագանդա էր մղում ընդդեմ սուլթանիզմի ու խանական Պարսկաստանի։ Նա «Հյուսիսում» առաջ էր քաշում այն միքը, թե Պարսկաստանի ճնշված հայությունը պետք է գաղթի Տավրոսյան լեռները, պետք է ձուլվի տեղի հայ լեռնականների հետ, ուժեղացնի իր դիրքերը և անտեսապես ե ռազմականապես, որով պիտի հնարավոր լիներ ձեռք բերել ազգային-քաղաքական անկախություն։ «Պարսից հարկ տալով, տուրք տալով ինչ պետք է դառնաս, խոյեցի եղբայր,—գրում էր Պատկանյանը,—գնա այնպիսի երկիր, որ ինքդ քեզ միայն լինես հարկատու և ոչ այլոց, ուր որ դատարանդ ճշմարտությամբ կդատի, քո կրոնը չի հայհոյվիր, քո ազգությունը քեզ համար ծանր բեռ չի դառնար...։ Դնա, խոյեցի, Մարաշի կողմը, գնա Զեյթուն, այն է այժմ քեզ պես հայերու համար ավետյաց երկիրը, ուր որ կարիք ազատ կյանք վարելու։»[1]

Այն ժամանակ, երբ Պարսկաստանի ազատագրյալ հայությանը Պատկանյանը կոչ էր անում դնալ Կիլիկիա, այդ նույն ժամանակներում Մոսկվայի Լազարյան ճեմարանի ասուչ Դ. Քանանյանցը ցարական կառավարության ուշադրությունն էր հրավիրում օգուտ քաղել զեյթունցիների ծանր վիճակից, և նրանց գաղթեցնել Կովկաս։

Քանանյանցը գտնում էր, որ զեյթունցիներն իրենց փրկությունը կգտնեն Ռուսաստանում։ Նա ռուսաց կառավարությանը համոզում էր, որ Կովկասից գաղթած չերքեզներին կարող էին փոխարինել Զեյթունի հայ լեռնականները։[2] Քանանյանցը ամեն կերպ ջանում էր ռուս կառավարող բարձր շրջաններին համոզել, որ Կովկասը ծաղկած երկիր դարձնելու համար, այժմ ավելի քան հարկավոր են գործունյա, աշխատասեր մարդիկ։ Նա կշտամբում էր ռուս բյուրոկրատիային՝ փոխելու իր վերաբերմունքը դեպի հայերը։ «Մեր կարծիքն այս է, թե Ռուսաստանի քաղաքական գիտավորությանը ավելի հարմար է ոչ միայն չօտարացնել իրմե զոհերը, այլև վարվել անոնց հետ մեծ համակրությամբ, վստահությամբ։»[3] Քանանյանցը հույս էր հայտնում, որ այդ դեպքում Զեյթունի բնակիչները կարող էին համակերպվել և իրենց Տավրոսի լեռները փոխել Կովկասյան լեռների հետ։[3]

Զեյթունի 1862 թվի դեպքերը առիթ հանդիսացան եվրոպական մեծ պետությունների միջամտությանը, որպեսզի այն օգտագործեին իրենց էքսպանսիայի համար՝ Մերձավոր Արևելքում։

1850-ական թվականներից Ֆրանսիայի կաթոլիկ միսիոներները և ճանապարհորդները լայն պրոպագանդա էին մղում Կիլիկիայում։ Բոլոր միջոցներով աշխատում էին դեպի իրենց գրավել Կիլիկիայի հայությանը։ Ճիշտ է նկատել Ա. Հովհաննիսյանը, որ ամենից առաջ այդ նպատակն էր հետապնդում Վիկտոր Լանգլուայի կատարած ճանապարհորդությունը դեպի Կիլիկիա 1861 թվին լույս տեսած «Voyage dans la Cilicie, execute pendant les annees 1852—53» իր աշխատության

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք ժ., էջ 56.

[2] «Փարիզ», Փարիզ, 1862 թ., № 75.

[3] «Կռունկ հայոց աշխարհին», 1862 թ., № 9, էջ 278 և հետո։

[1] «Հյուսիս», 1863 թ., № 2, էջ 70։

[2] «Մասյաց Աղավնի», Թեոդոսիա, 1864 թ. Գեորգ Քանանյանց—«Զեյթունի հայք և զանոնք Կովկաս փոխադրելու առաջարկություն», ժա—ժբ, էջ 186—191։

[3] Նույն տեղում, էջ 189։

[3] Նույն տեղում, էջ 191։

մեջ. Լանգլուան առաջ էր քաշում այն միտքը, որ Լիբանանի մարոնիտների և հայ լեռնականների ռազմական ունակությունները ու նրանց քաջությունը կարելի է ի սպաս դնել Ֆրանսիայի Արևելյան էքսպանսիային. Լանգլուան գրում էր.

«Այս հայ լեռնականները, ընդհանրապես բարձրահասակ, քաջ և կորովի են։

Մի քանի տարի առաջ, նրանք Գոլիս էին ուղարկել մի պատգամավորություն՝ իրենց և Բ. Դռան միջև առկախ մնացած մի հարց լուծելու համար։ Իմ բարեկամներից մեկը, որ առիթ էր ունեցել տեսնելու այս լեռնական պատգամավորության անդամներին, ինձ ասում էր, որ հազար զեյթունցի կարող է Դարամանիան տակնուվրա անել ու գրավել, եթե այդպիսի մի արշավի մտադրված լիներն։ Ես համաձայն եմ այդ դատողությունը։ Իրերի ներկա վիճակում թող թույլ տրվի մեզ բաղձալ Ծավրոսյան հայերի լիակատար անկախությունը։ Նրանք մարոնիտների հետ Արևելքի ֆրանսիացիներն են։»[1]

Ֆրանսիական օրիենտացիայի երդվյալ պաշտպան Անտոն [illegible]ությունը հայ լեռնականներին հավատացնում էր, որ կաթոլիկ եկեղեցուց դուրս նրանց համար չկա ոչ մի փրկություն։

Ուղղակի և անուղղակի ճանապարհներով Կ. Գոլսի հայ կաթոլիկ եկեղեցու պետ Հասունյանին հաջողվեց դավանափոխ անել Զեյթունի և Մարաշի հայ բնակչության մի զգալի մասը։

«Փուրիե դ Օրիան» լրագիրը նոյեմբեր 18 թվական (1863) կհրատարակեր Զեյթունի և Մարաշի ժողովրդյան դիմումը առ փոխ հյուպատոսն Գաղղիո պարոն Մոլինարի, հռոմեական եկեղեցվո հետ միանալու համար։ Փոխ հյուպատոսն այս իրաքը հաղորդեց Երուսաղեմա լատին պատրիարքին...»[2]

Այս բոլորից հետո ֆրանսիական կառավարությունը «պաշտպան կանգնեց» հայ լեռնականներին և արգելեց թուրքերի նոր արշավանքը Զեյթուն։ Զեյթունի բնակչությունը կասկածանքով էր վերաբերվում ֆրանսիական «ազնվությանը», և թափանցելով Նապոլեոնի նպատակների մեջ, հրաժարվեց ֆրանսիական օրիենտացիայից։

Զեյթունի ապստամբությունն ուսումնասիրող բանասերներից Վ. Նուրիխանը հիշատակելով կաթոլիկ կղերականության և ֆրանսիական կառավարության հետապնդած նպատակները, գրում էր.

«Բայց երբ զեյթունցիք... անցան առ պատրիարքն հայ էջմիածնական և Թոդուցին գնոսունյան արքեպիսկոպոսը, այն ատեն Հասունյանի հրաժարվելովը խնդրույն մէջէն Նապոլեոն Գ-ն ևս հրաժարեցավ յայնմհետե միջամտելու հանձնաժողովույն բրած քննությունքը, մանավանդ իր փափագին չհամաձայնելով։»

Ավելի քան բնորոշ է անգլիական կառավարության, բռնած դիրքը՝ հանդեպ Զեյթունի 1862 թվի դեպքերը։

1862 թվի հերոսամարտից հետո զեյթունցիները դիմումներ են կատարում Կ. Գոլսի Եվրոպական պետությունների դեսպաններին որոնց թվում և անգլիական դեսպան Հենրի Գուլիվերին։ Ուշագրավ է դեսպանի վերաբերմունքը զեյթունցի պատգամավորներին։

«Զեյթունցվոց վերոհիշյալ աղերսագիրը իրեն (անգլիական դեսպանին—Վ. Մ.) մատուցողը շատ դաժան և արհամարհոտ կերպով ընդուներ էր և աչք մը ձգելեն վերջը ըսեր էր դայրագին. «Բայց գուք պետք է գիտնաք, թե այդ ձեր անդգամ զեյթունցիք, այդ ավազակները, դատ վատ գործողություն ըրեր են, և Ագիզ փաշային խորտակեր ու փախուցեր են. ինչպես կնամարձակիք հիմա իրենց կողմեն ինձ աղերսագիր բերիք։»[3]

Կ. Գոլսում լույս տեսնող անգլիական «Լևանտ հերալդ» թերթը այդ նույն օրերին կատաղի կամպանիա էր սկսել զեյթունցիների դեմ. թերթը կոչ էր անում մահմեդականությանը վրեժխնդիր լինել հայերից։

Անգլիական մամուլի գեմ գուրս եկան «Մալիկը», «Մեղուն» և մյուս դեմոկրատական թերթերը։

Անգլիայի թշնամական վերաբերմունքը դեպի հայ ազգային-ազատագրական շարժումները մերկացնում էր ֆրանսիացի հրապարակախոս Սեն Մարտ Ժիրարդեն։

«Արդ, այս միջոցին,—գրում էր Ժիրարդեն,—Մահմետական ամեն բան առ ինքն կենտրոնացնելու մոլությամբ բռնած է Անգլիա պաշտպանության շնորհիվ...»[4]

Շատ իրավացի էր Ժիրարդեն, երբ Թյուրքիայի կողմից հայերի բնաջնջման դատապարտությունը գցում էր անգլիական կառավարության վրա, քանի որ նա էր հովա-

[1] Voyage dans la Cilicie. execute pendant les annees 1852—1853. Paris, 1861, page 150.

[2] Վ. Նուրիխան—«Պատմություն ժամանակակից», մասն Բ, էջ 828։

[3] Նույն տեղում, էջ 830։

[4] «Փորձ», 1879, № 11, էջ 24։

[5] Նույն տեղում։

նավորողն ու պաշտպանը հալածանքների ու հնշումների այն քաղաքականության, որ Թուրքիան գործադրում էր ոչ միայն հայության, այլև իր գաբշապարի տակ դանվող բոլոր ժողովուրդների վրա։

Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժումը հնշվում էր հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունը ոտնահարող եվրոպական կապիտալիզմի ու սուլթանական բռնակալության դաժան ռեժիմի ներքո։ Այդ ցայտուն կերպով դրսևորվեց ինչպես Զեյթունի 1862 թվի, նույնպես 1879 և 1884 թվերի ապստամբությունների ընթացքում։